

Էլեկտրաէներգետիկական համակարգին Էլեկտրական Էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագնի հաշվարկման մեթոդաբանություն

Սույն մեթոդաբանությունը սահմանում է էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մատուցման սակագների հաշվարկման սկզբունքները:

1. Անհրաժեշտ հասույթի որոշումը

1.1 Ծառայության մատուցման սակագնի հաշվարկման հիմքում դրվում է փարեկան անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, համաձայն որի անհրաժեշտ հասույթը բավարարում է իրականացնելու Լիցենզավորված անձի հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար պահանջվող բոլոր գործառնական ծախսերը և ապահովելու ներգրավված կապիտալի դիմաց թույլատրելի (ողջամիտ) շահույթը:

Անհրաժեշտ հասույթը (**ԱՆ**) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԱՆ} = \text{ԹԾ} + \text{Մ} + \text{ԹՇ},$$

որտեղ՝

ԹԾ-ն թույլատրելի փարեկան ծախսերն են,

Մ-ն հիմնական միջոցների փարեկան մաշվածության գումարն է,

ԹՇ-ն թույլատրելի շահույթն է:

1.2 Թույլատրելի ծախսերում (**ԹԾ**) ներառվում են սակագների հաշվարկման 12-ամսյա ժամանակաշրջանի (այսուհետ՝ հաշվարկային փարի) ընթացքում կատարվող ընթացիկ ծախսերը, որոնք անհրաժեշտ են Լիցենզավորված անձի բնականոն գործունեությունն ապահովելու համար, այդ թվում՝

ա) շահագործման – պահպանման ծախսերը, ներառյալ՝

- արտադրական անձնակազմի աշխատավարձը, այդ թվում՝ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարումները,
- շահագործման համար անհրաժեշտ օժանդակ նյութերի ծախսերը,
- նորոգման ծախսերը, որոնք ընդգրկում են ինչպես սեփական ուժերով, այնպես էլ կապալառու կազմակերպությունների կողմից իրականացվող նորոգման աշխատանքների արժեքը,
- այլ գործառնական ծախսերը.

բ) հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից) – Նայասփանի Նանրապետության օրենքներով սահմանված փուրքերն ու պարպադիր այլ վճարները,

գ) Նայասփանի Նանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերը:

Թույլատրելի ծախսերում չեն ընդգրկվում լիցենզավորված գործունեության հետ չառնչվող ծախսերը, որոնց համար Լիցենզավորված անձը իրականացնում է առանձնացված հաշվառում:

Սակագնի սահմանման (վերանայման) հայտ ներկայացնելիս, Լիցենզավորված անձը պետք է ներկայացնի աուդիտորի կողմից ստուգված նախորդ տարվա ծախսերը, ընթացիկ տարվա փաստացի (կանխատեսվող) ծախսերը և հաշվարկային տարվա նախատեսվող ծախսերը:

1.3 Նիմնական միջոցների տարեկան մաշվածության (**Մ**) գումարները հաշվարկվում են գծային մեթոդով՝ ելնելով Ծառայության մարուցման համար Նայասփանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Նանձնաժողով) կողմից օգտակար և օգտագործվող ճանաչված հիմնական միջոցների սկզբնական (ձեռքբերման) արժեքից կամ ֆինանսական հաշվետվություններում դրան փոխարինող այլ գումարից և օգտակար ծառայության ժամանակահատվածից:

1.4 Թույլատրելի է համարվում շահույթի (**ԹՇ**) այն մեծությունը, որը Լիցենզավորված անձին հնարավորություն է տալիս կատարել ակտիվների ֆինանսավորման համար ներգրավված կապիտալի հետ կապված պարտավորությունները և չխոչընդոտել Լիցենզավորված անձի զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ սեփական կամ փոխառու միջոցների ներգրավումը:

Լիցենզավորված անձի ակտիվների ֆինանսավորման աղբյուրներից, պայմաններից – հնարավորություններից ելնելով՝ թույլատրելի շահույթի որոշման համար օգտագործվում են հետ–յալ եղանակները.

ա) զուտ ակտիվների շահույթի նորմայի եղանակ,

բ) անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հարուցման եղանակ:

1.5 Զուտ ակտիվների շահույթի նորմայի եղանակի կիրառման դեպքում թույլատրելի շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի (**ՇԲ**) – թույլատրելի շահույթի նորմայի (**ՇՆ**) արտադրյալ՝

$$\text{ԹՇ} = \text{ՇԲ} * \text{ՇՆ}:$$

Շահույթի հաշվարկման բազա է հանդիսանում Լիցենզավորված անձի զուտ ակտիվների արժեքը, որը հաշվարկվում է հետ–յալ բանաձևով՝

$$\text{ՇԲ} = \text{ՕՕՈԸԱ} - \text{ԿՄ} + \text{ՇԿ},$$

որպեղ՝

ՕՕՈԸԱ-ն Ծառայության մատուցման համար Նանձնաժողովի կողմից օգտակար – օգտագործվող ճանաչված ոչ ընթացիկ ակտիվների, այդ թվում՝ հողի, շենքերի, կառուցվածքների – սարքավորումների, մեքենա-մեխանիզմների – այլ նյութական ակտիվների արժեքն է,

ԿՄ-ն ոչ ընթացիկ ակտիվների կուտակված մաշվածությունն է, որը հաշվարկվում է սույն մեթոդիկայի 1.3 կետով սահմանված սկզբունքով:

ՇԿ-ն շրջանառու կապիտալի՝ Նանձնաժողովի կողմից թույլատրելի համարվող մեծությունն է, որի մեջ մտնում են Ծառայության իրականացման գծով Լիցենզավորված անձի ընթացիկ պարտավորությունների կատարման համար պահանջվող կանխիկ միջոցները, նյութերը և պահեստամասերը:

Շահույթի հաշվարկման բազան ժամանակ առ ժամանակ (բայց ոչ հաճախ, քան փարին մեկ անգամ) վերահաշվարկվում է հաշվի առնելու համար՝

ա) օգտակար և օգտագործվող ճանաչված ակտիվներում կատարված ներդրումները,

բ) կուտակված մաշվածության փոփոխությունը,

գ) շրջանառու կապիտալի թույլատրված մեծության փոփոխությունը,

դ) արժույթային փոխարժեքների փոփոխությունները այն դեպքերի համար, երբ ակտիվները ձեռք են բերված արտարժույթով:

Շահույթի թույլատրելի նորման սահմանվում է Լիցենզավորված անձի կապիտալի միջին կշռությային արժեքին հավասար, որն իրենից ներկայացնում է փոխառու – սեփական կապիտալի միջին արժեքը՝ հաշվարկված կապիտալի կառուցվածքում նրանց բաժնեմասերի կշիռներին համապատասխան.

$$\text{ՇՆ} = \frac{U\text{Կ} * r_u + \sum_i \Phi\text{Կ}_i * r_{\Phi_i}}{U\text{Կ} + \sum_i \Phi\text{Կ}_i},$$

որպեղ՝

ՄԿ-ն – r_u -ն համապատասխանաբար սեփական կապիտալի մեծությունն է հաշվարկային փարվա սկզբում – նրա թույլատրելի (ողջամիտ) շահույթի նորման՝ մինչև հարկումը,

$\Phi\text{Կ}_i$ -ն – r_{Φ_i} -ն համապատասխանաբար i -րդ փոխառության չմարված մնացորդն է հաշվարկային փարվա սկզբում – նրա սպասարկման արժեքը:

Այս եղանակի կիրառման դեպքում ներգրավված կապիտալի նկատմամբ պարտավորություններն ամբողջությամբ իրականացվում են շահույթի և մաշվածության գումարների հաշվին: Նանձնաժողովի կողմից հաստատված ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի պահանջներին համապատասխան կատարված ներդրումները

հաշվի են առնվում դրանց իրականացումից հետո՝ շահույթի և մաշվածության բազայում ներառման միջոցով:

1.6 Անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հաբուցման եղանակի կիրառման դեպքում թույլատրելի շահույթը հաշվարկվում է՝ հաշվի առնելով Լիցենզավորված անձի փաստացի ֆինանսական պարտավորությունները և սույն մեթոդիկայի 1.2 կետում նշված թույլատրելի ծախսերի կազմում չընդգրկված այն լրացուցիչ ծախսերը, որոնք անհրաժեշտ են Ծառայության մաբուցման անխափան գործունեության և որակի բարելավման համար: Նախապես հաշվի առնելով, որ այդպիսի ծախսերի ֆինանսավորման աղբյուր են նա– մաշվածության գումարները, անհրաժեշտ հասույթի հաշվարկում մաշվածության և շահույթի փոխարեն ընդգրկվում են հետևյալ մեծությունները՝

ա) Նանձնաժողովի հետ համաձայնեցված փոխառու միջոցների սպասարկման (տոկոսավճարներ) և մարման ծախսերը, որոնք որոշվում են Լիցենզավորված անձի առկա պարտքերի սպասարկման – մարման ժամանակացույցից,

բ) փոխառու միջոցներով և շահագործման ծախսերով չֆինանսավորվող փարեկան կապիտալ ծախսերը, որոնք Լիցենզավորված անձը կատարում է հիմնական միջոցների համալրման համար՝ Ծառայությունների անխափանությունն ապահովելու նպատակով, – որի ֆինանսավորումը պետք է իրականացվի փոխալ փարվա հասույթից:

Նշված ծախսերը ներառվում են անհրաժեշտ հասույթի կազմում՝ Նանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումային ծրագրերում նախատեսված չափերով:

1.7 Անհրաժեշտ հասույթի հաշվարկում ընդգրկված ծախսերի որոշման համար հիմք են հանդիսանում հաշվարկային փարվան նախորդող 12-ամսյա ժամանակաշրջանում Ծառայության մաբուցման համար Լիցենզավորված անձի կողմից կատարված փաստացի ծախսերը, որոնց վերաբերյալ գոյություն ունի սպառիչ փրեդեկավորություն:

Նշված փաստացի ծախսերը ճշգրտվում են՝ հաշվի առնելով սակագնային հայտի ներկայացման պահին արդեն հայտնի և նոր սակագնի գործողության ընթացքում կանխատեսվող ողջամիտ փոփոխությունները:

2. Սակագների մշակում

2.1 Լիցենզավորված անձի համար, Էլեկտրաէներգետիկական համակարգին մաբուցվող ծառայության հաշվառման հնարավորություններից և նպատակահարմարությունից ելնելով, կիրառվում են միադրույք սակագներ:

2.2 Միադրույք սակագնի դեպքում Ծառայությունների քանակի միավոր է հանդիսանում Էլեկտրական էներգիայի քանակի միավորը (կՎտժ) – սակագինը հաշվարկվում է որպես Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի (ԱՆ) ու փարվա

ընթացքում ներքին սպառողների և արտահանողների համար հաղորդվող էլեկտրական էներգիայի քանակի հարաբերություն՝

$$U = \frac{W_{\text{է}}}{W_{\text{է}} + W_{\text{ա}}},$$

որտեղ՝

$W_{\text{է}}$ -ն փարվա ընթացքում ներքին սպառման համար հաղորդվող էլեկտրական էներգիայի քանակն է, որը որոշվում է Նանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի համաձայն,

$W_{\text{ա}}$ -ն փարվա ընթացքում պայմանագրերով ամրագրված արտահանվող էլեկտրական էներգիայի փարեկան քանակն է, իսկ դրանց բացակայության դեպքում՝ նախորդ փարվա փաստացի արտահանված էլեկտրական էներգիայի քանակությունն է, որը որոշվում է Նանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի համաձայն: